

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ

ԲԱԺԻՆ I. ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

ԳԼՈՒԽ 1. «ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. «Վարչական սահմաններ» բազային խմբի տարածական տվյալները հանդիսանում են տարածական հիմք այլ ոլորտներին վերաբերող թեմատիկ տարածական տվյալները կապակցելու կամ ներկայացնելու համար:

2. «Վարչական սահմաններ» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի կառուցման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ արդյունավետ կառավարում, քարտեզագրում, մոդելավորում իրականացնելու համար:

3. Վարչական սահմաններին վերաբերող տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

1) Պարունակում են հանրային հատվածի համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն:

2) Տեղեկատվությունը կիրառելի է կառավարման բոլոր մակարդակներում:

3) Տեղեկատվությունն իրենից ներկայացնում է կառուցվածք, որը ժամանակի ընթացքում համեմատաբար կայուն է:

4) Հանդիսանալով տարածական տվյալների ենթակառուցվածքի մի մաս՝ տվյալները կարող են կիրառվել այլ տարածական տվյալների հետ:

4. «Վարչական սահմաններ» բազային խմբի տարածական տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

5. Վարչական միավորները, կառավարման նպատակով բաժանված, վարչական սահմաններով առանձնացված տարածքներ են, որտեղ պետությունն ունի և (կամ) իրականացնում է տեղական, մարզային և ազգային մակարդակներում կառավարման լիազորված իրավունքներ: Վարչական սահմանների տարածական տվյալների շերտերը հիմնականում կիրառվում են.

1) որոնման նպատակով-մուտքագրված անվան կամ կոդի հիման վրա այլ տարածական տվյալների որոնում/ֆիլտրում,

2) տեղեկատվության կապակցման նպատակով-թեմատիկ տեղեկատվությունը արագ և համեմատելի կերպով միմյանց հետ կապակցել / հրապարակել,

3) իրավասու մարմիններին գտնելու նպատակով-օրինակ աղետների դեպքում, շրջակա միջավայրի պաշտպանության համար և այլն,

4) հիմք են հանդիսանում սահմանների վրա հիմնված վերլուծությունների և մոդելների համար:

6. Վարչատարածքային բաժանումն ունի հիերարխիկ կառուցվածք, որտեղ ամենացածր մակարդակի միավորները ձևավորում են ավելի բարձր մակարդակի միավորներ, որոնք կազմում են այլ, ավելի բարձր մակարդակի միավորներ: Յուրաքանչյուր վարչական միավոր ունի եզակի նույնականացուցիչ, նկարագրվում է իր աշխարհագրական անվանումով, գտնվելու վայրով, կադաստրային կոդով և երկրի վարչական կառուցվածքում հիերարխիկ մակարդակով:

7. «Վարչական սահմաններ» տարածական տվյալների խմբի մեջ ներառված օբյեկտները ներկայացված են պոլիգոնային տեսքով: Այդ տվյալները ներկայացված են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերով.

- 1) Մարզի սահման
- 2) Համայնքի սահման
- 3) Բնակավայրի սահման
- 4) Վարչական շրջանի սահման:

8. **Մարզի սահման**- Մարզը հանդես է գալիս որպես վարչատարածքային միավոր, որը կազմված է նրա մեջ ընդգրկված համայնքների տարածքներից և պետական սեփականություն հանդիսացող հողային և ջրային այլ տարածքներից: «Մարզի սահման» տարածական շերտը ներկայացված է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 1):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Մարզի անվանում (Name of the region) ցույց է տալիս մարզին տրված աշխարհագրական անվանումը, որը սահմանված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով:

3) Մարզկենտրոն (Marz_Center) ներկայացվում է տվյալ մարզի վարչական կենտրոնի անվանումը:

4) Մարզի ծածկագիր (Marz_Code) նշվում է մարզի կադաստրային ծածկագիրը, որը կազմվում է երկնիշ թվերից և սկսվում է 02-ից:

5) Մակերես (Area)

Աղյուսակ 1. Մարզի սահման շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Մարզկենտրոն (Marz_center)	VarChar (10)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (10)
Մակերես (Area)	Double(6)

9. *Համայնքի սահման*- Համայնքները ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են, որոնց մեջ ներառված են բնակավայրեր՝ առանձին կամ այլ բնակավայրի (բնակավայրերի) հետ միասին, իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական միավորներ: Մեկից ավելի բնակավայրերից բաղկացած համայնքը կոչվում է բազմաբնակավայր համայնք: Համայնքներին վերաբերող տարածական շերտը ներկայացված է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 2).

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Համայնքի անվանում (Community_Name) նշվում է համայնքի անվանումը, որը սահմանված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով:

3) Համայնքի ծածկագիր (Community_Code) նշվում է համայնքային կենտրոն հանդիսացող բնակավայրի կադաստրային ծածկագիրը, իսկ Երևան քաղաքային համայնքի դեպքում՝ 01 կադաստրային ծածկագիրը:

4) Մակերես (Area)

5) Բնակավայրի անվանում (Settlement_Name) ներկայացվում են համայնքում ընդգրկված բնակավայրերի անվանումները, իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանների անվանումները, որոնք սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով:

6) Սկզբի ամսաթիվ (Start_Date) ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ համայնքին վերաբերող տվյալի մուտքագրման ամսաթիվը:

7) Վերջին ամսաթիվ (End_Date) ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ համայնքին վերաբերող տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

8) Մարզի անվանում (Name of the region) ցույց է տալիս այն մարզի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ համայնքը:

Աղյուսակ 2. ՀՀ համայնքներ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (50)
Համայնքի ծածկագիր (Community_Code)	VarChar (15)
Մակերես (Area)	Double(6)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (50)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)

10. **Բնակավայրի սահման-** Բնակավայրը բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավոր է: Առանձնացնում են քաղաքային և գյուղական բնակավայրեր: Բնակավայրերին վերաբերող տարածական շերտը ներկայացված է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 4):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Բնակավայրի անվանում (Settlement_Name) ցույց է տալիս բնակավայրի ներկայիս անվանումը:

3) Հին անվանում (Old_Name) ցույց է տալիս բնակավայրի նախկին անվանումը:

4) Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)- բնակավայրի ծածկագիրն է, կազմվում է եռանիշ թվերից և սկսվում է 001-ից,

5) Բնակավայրի տեսակ (Settlement_Type) ցույց է տալիս բնակավայրի տեսակը՝ քաղաքային, գյուղական:

6) Մակերես (Area)

7) Սկզբի ամսաթիվ (Start_Date)

8) Վերջի ամսաթիվ (End_Date)

9) Մարզի անվանում (Name of the region) ցույց է տալիս այն մարզի անվանումը որտեղ գտնվում է տվյալ բնակավայրը:

10) Համայնքի անվանում (Community_Name) ցույց է տալիս այն համայնքի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ բնակավայրը:

Աղյուսակ 4. ՀՀ բնակավայրեր շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (50)
Հին անվանում (Old_Name)	VarChar (50)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (15)
Բնակավայրի տեսակ (Settlement_Type)	VarChar (10)
Մակերես (Area)	Double(6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (15)

11. Վարչական շրջան- վարչական շրջանը բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ վարչական

շրջաններից տարանջատված տարածքային միավոր է: Վարչական շրջանին վերաբերող տարածական շերտը ներկայացված է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 3).

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id)
- 2) Վարչական շրջանի անվանում (Administrative_region_Name)
- 3) Վարչական շրջանի ծածկագիր (Administrative_region_Code)
- 4) Մակերես (Area)
- 5) Սկզբի ամսաթիվ (Start_Date)
- 6) Վերջին ամսաթիվ (End_Date)
- 7) Համայնքի անվանում (Community_Name)

Աղյուսակ 3. ՀՀ վարչական շրջաններ շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Վարչական շրջանի անվանում (Administrative_region_Name)	VarChar (50)
Վարչական շրջանի ծածկագիր (Administrative_region_Code)	VarChar (15)
Մակերես (Area)	Double(6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (50)

- 8) Տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ տոպոլոգիական կանոններին.
 - ա. պետք է բացառվեն կից վարչական միավորների սահմանների վերադրման, միմյանց հետ հատման դեպքերը.
 - բ. կից վարչական միավորների միջև չպետք է լինեն բացթողումներ (gaps): Երկրաչափական անհամապատասխանությունների պատճառով վարչական

միավորների միջև չնախատեսված բացերն սկզբունքորեն չեն թույլատրվում: Հարևան վարչական ստորաբաժանումների սահմանները պետք է ունենան նույն կոորդինատները.

գ. վարչական միավորների սահմանային գիծը պետք է համապատասխանի այդ վարչական միավորի սահմանները ներկայացնող այլ միավորների սահմաններին:

**ԳԼՈՒԽ 2. «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

12. «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալները համարվում են ռեֆերենց: Այսինքն՝ դրանք այնպիսի տվյալներ են, որոնք հանդիսանում են տարածական հիմք այլ ոլորտներին վերաբերող թեմատիկ տարածական տվյալներ կապակցելու կամ ներկայացնելու համար: «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալները դիտարկվում են քարտեզագրական տեսանկյունից: Հատկանշական է, որ անշարժ գույքին վերաբերող տեղեկատվությունը պետք է ներկայացվի միասնական տվյալների բազա միայն այն դեպքում, երբ դրանք արդեն ներկայացված են կադաստրային ռեգիստրի էլեկտրոնային բազայում (օր. բաժանվող կամ միավորվող գույքի դեպքում փոփոխությունը ներկայացվում է միայն գույքի հաստատումից, վավերացումից ու գրանցումից հետո): Անշարժ գույքը երկրի մակերևույթի (հող և/կամ ջուր) հնարավորինս առանձնացված տարածքներ են, որոնց նկատմամբ առկա են որոշակի իրավունքներ, որոնք սահմանվում են օրենսդրությամբ: Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության: «Անշարժ

գույք» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ միասնական պետական ռազմավարություն, արդյունավետ կառավարում, քարտեզագրում և մոդելավորում իրականացնելու համար:

13. «Անշարժ գույք» տարածական տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

1) պարունակում են հանրային հատվածի համար հետաքրքրություն ներկայացնող տարածական տեղեկատվություն.

2) տեղեկատվությունը կիրառելի է կառավարման բոլոր մակարդակներում.

3) «Անշարժ գույք» տարածական տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

14. «Անշարժ գույք» տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերը"

1) շենք-շինություն,

2) հողամաս,

3) կադաստրային թաղամաս:

15. *Շենք-շինություն* շերտը համարվում է առանցքային կարևորություն ունեցող շերտերից մեկը, քանի որ մի կողմից, շենքերը այն վայրերն են, որտեղ մարդիկ ապրում են, աշխատում և ծախսում են իրենց ժամանակի մեծ մասը, որտեղ նրանք պետք է ունենան կենսապահովման լավ պայմաններ, պաշտպանված լինեն ռիսկերից (ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլն), աղտոտիչներից (աղմուկ, օդի աղտոտում և այլն): Մյուս կողմից էլ, շենքերը և նրանց բնակիչները բնական ռեսուրսներ սպառող են հանդիսանում (ջեռուցում, հող, տրանսպորտ, շինարարական նյութեր և այլն), հետևաբար, անհրաժեշտ է խթանել և վերահսկել քաղաքների տարածումը և նպաստել ավելի կայուն շինարարությանը: Շենք-շինություններն իրենց պատմական կամ ճարտարապետական հետաքրքրության պատճառով կարող են նաև հատուկ պահպանվող օբյեկտներ լինել:

1) *Շենք-շինությունները* բնական կամ արհեստական նյութերից, երկրի վրա, ստորերկրյա կամ վերերկրյա կառուցված ծավալային, հարթային կամ գծային շինարարական համակարգ են՝ կազմված կրող, պարփակող կամ համակցված (կրող և պարփակող) կոնստրուկցիաներից և նախատեսված բնակվելու կամ ժամանակավոր գտնվելու, տարբեր աշխատանքային ու արտադրական պրոցեսներ կատարելու (կախված ֆունկցիոնալ նշանակությունից), նյութերի, շինվածքների ու սարքավորումների տեղադրման կամ պահեստավորման, մարդկանց ու բեռների տեղափոխման, պաշտպանական և այլ նպատակների համար:

2) Ըստ նպատակային նշանակության՝ շենք-շինությունները դասակարգվում են հետևյալ 3 խմբերի.

ա. Բնակելի

բ. Հասարակական

գ. Արտադրական:

3) Բնակելի նպատակային նշանակության շենք-շինությունները, ըստ գործառնական նշանակության լինում են.

ա. Անհատական բնակելի տուն՝ առանձնատուն, այգետնակ (ամառանոց),

բ. Օժանդակ և տնտեսական շինություն՝ անասնաշենք, հացատուն, խորդանոց, մարագ, ցախատուն, անհատական օգտագործման ավտոտնակ, շվաքարան, ջերմոց, մառան, լողավազան, ջրավազան, պարիսպ և այլ բնակելի կառույց,

գ. Բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենք,

դ. Ավտոտնակ՝ ավտոկայանատեղի, ավտոհանգրվան,

ե. Հանրակացարան:

4) Հասարակական նպատակային նշանակության շենք-շինությունները, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են.

ա. Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, գիտական, գիտահետազոտական, կրթական, ուսումնական, նախադպրոցական, հանրակրթական, ուսումնարան, միջին մասնագիտական, բարձրագույն, լրացուցիչ

կրթության, արտադարձցական դաստիարակության, ուսանողական հանրակացարան և այլ գիտակրթական շինություն)։

բ. Առողջապահության, սոցիալական ապահովության շենք և շինություն՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, հոսպիտալ, ամբուլատորիա, շտապ բժշկական օգնության կայան, ծննդատուն, կաթնային խոհանոց, դեղատուն, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, առողջապահական գործակալություն, վերականգնողական կենտրոն, դիագնոստիկ կենտրոն, առողջարան, առողջարանային դարձցական ճամբար, մանկատուն, ծերանոց, պրոֆիլակտորիա և այլ առողջապահական ու սոցիալական շինություն։

գ. Սպորտի, հանգստի և ժամանցի շենք և շինություն՝ մարմնակրթական կենտրոն, սպորտային կենտրոն, մարզադաշտ, ձիարշավարան, կենդանաբանական այգի, բուսաբանական այգի, թենիսի կորտ, լողավազան, ավտոդրոմ, հրաձգարան, սպորտային դահլիճ, հանգստյան տուն, հանգստի բազա, երիտասարդական ճամբար, հյուրանոց, զբոսաշրջային բազա, մոթել, քենփինգների գիշերային ակումբ, ատրակցիոն խաղերի դահլիճ, ավտոմատ խաղերի դահլիճ, խաղատուն և այլ սպորտի, հանգստի ու ժամանցի շինություն։

դ. Մշակույթի, արվեստի շենքեր և շինություններ՝ գրադարան, թանգարան, ցուցասրահ, պատկերասրահ, ակումբ, մշակույթի տուն, թատրոն, հանգստի կենտրոն, կինոթատրոն, համերգային համալիր, մարզահամերգային համալիր, կրկեսների, արվեստանոց և այլ մշակութային շինություն։

ե. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքեր և շինություններ՝ խանութ, կրպակ, շուկա, տոնավաճառ, ռեստորան, բար, ճաշարան, սրճարան, ավտոլցավորման կայան, գազալցման կայան, ավտոտեխսպասարկման կայան, հանրային ավտոկայանատեղի, վերանորոգման կետ, լուսանկարչատուն, քիմիական մաքրման կետ, կոշիկի և կարի անհատական պատվերների սրահ, վարսավիրանոց, լվացքատուն, երկրորդական հումքի ընդունման կետ, ներկատուն և այլ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման։

գ. Կոմունալ տնտեսության շենքեր և շինություններ՝ հարսանյաց տուն, սգո սրահ, գերեզմանատուն, բաղնիք, սաունա, հասարակական զուգարան և այլ կոմունալ տնտեսության:

է. Վարչակառավարչական, ֆինանսական, կապի և տրանսպորտի շենքեր և շինություններ՝ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական հիմնարկ, հասարակական կազմակերպություն, դրամատուն, բանկ, տարբեր տեսակի գրասենյակներ, իրավաբանական խորհրդատվության, նոտարական գրասենյակ, տարբեր տեսակի գործակալություններ, կապի բաժանմունք, ավտոկայան, օդանավակայան, երկաթուղային կայարան, ուղևորների սպասարկման գրասենյակ, տրանսպորտային գործակալություն, տոմսերի իրացման կետ, հրշեջ կայան, լրատվական կենտրոն, արխիվ, ապահովագրության հիմնարկ, դեսպանություն, հյուպատոսություն, միջազգային կազմակերպություն, հեռուստաընկերություն, ռադիոընկերություն, ավտոմատ հեռախոսակայան, քրեակատարողական հիմնարկ, զորամաս և այլ վարչակառավարչական, ֆինանսական, կապի և տրանսպորտի.

ը. Կրոնական, պաշտամունքային շենքեր և շինություններ՝ եկեղեցի, վանք, տաճար և այլ կրոնական, պաշտամունքային:

թ. Բնակչության պաշտպանության համար նախատեսված քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ՝ ապաստարան, հակաճառագայթային թաքստոց և այլ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական:

16. Արտադրական նշանակության շենքերը և շինությունները, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

1) Արդյունաբերական՝ գործարան, ֆաբրիկա, լվացքատուն, էլեկտրակայան, ենթակայան, թափոնների վերամշակման և վերջնական տեղադրման կառույց, ձկնաբուծարան, ձկնաբուծական լիճ, արհեստանոց, տարբեր տեսակի արտադրամասեր, կոմբինատ, լեռնահանքային արտադրություն, շինարարական կազմակերպություն, մեծածախ բազա, տպարան, պահեստ, գիտաարտադրական

կազմակերպություն, հանքարդյունաբերական, պոմպակայան, կարգավորիչ ջրամբար, մաքրման կայան, հիդրոտեխնիկական կառույց, կաթսայատուն, ավտոպարկ, դեպո և այլ արդյունաբերական շինություն.

2) Գյուղատնտեսական՝ անասնաշենք, թռչնանոց, ջերմոց, դեզանոց, չորանոց, սիլոսի հոր, պահեստ, անասնաբուժական կայան, արհեստական սերմնավորման կայան, սառնարանային տնտեսություն, կերախոհանոց, սերմնաբուժական կայան, թռչնաբուժական կայան, անասնաբուժական կայան, տնկարկային տնտեսություն, գյուղատնտեսական մեքենատրակտորային պարկ, գյուղատնտեսական մթերքների մթերման կետ և այլ գյուղատնտեսական շինություն.

17. Մեկից ավելի տարբեր նպատակային նշանակությամբ օգտագործվող շենքերը, շինություններն ընդգրկվում են այն նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման կազմում, որն ունի ավելի մեծ մակերես: Շենք-շինություններին վերաբերող տարածական տվյալների բազան ծառայում է մի քանի ընդհանուր նպատակների՝ տեղանքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու, տեղանքում կողմնորոշվելու, շենք-շինությունների հետ կապված բազային քարտեզներ, որոշակի մոդելներ ստեղծելու, տարածական պլանավորման և կառավարման, զարգացման ծրագրերի մշակման: Այս թեմային վերաբերող տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով և հետևյալ հատկանիշներով:

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)-օբյեկտի արտաքին նույնականացուցիչը պատասխանատուի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս նույնականացուցիչի հիմնական նպատակը տարբեր աղբյուրների և շենք-շինությունների միջև կապ ապահովելն է (օր. կադաստրի ռեգիստրի էլեկտրոնային բազայի հետ կապ, որտեղից կարելի է գտնել տեղեկատվություն սեփականատիրոջ, վարձատուի, գնահատման և այլնի մասին):

2) կադաստրային ծածկագիր (Cadastr_Code)- այն թվերի համակցություն է, որը տրվում է անշարժ գույքի միավորին կամ դրա առանձին մասերին և պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ միավորը գոյություն ունի որպես մեկ միասնական տարածական կամ նպատակային նշանակությամբ անբաժանելի ամբողջություն կամ չի փոփոխվել տվյալ միավորի կադաստրային տարածքը կամ ենթատարածքը:

3) մարզի ծածկագիր (Marz_Code)

4) բնակավայրի (վարչական շրջանի) ծածկագիր (Community_Code)

5) թաղամասի ծածկագիր (Block_Code)-կադաստրային թաղամասի ծածկագիրն է, կազմվում է քառանիշ թվերից, սկսվում է 0001-ից:

6) հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)-կազմվում է քառանիշ թվերից և սկսվում է 0001-ից:

7) շենք-շինությունների ծածկագիր (Building_Code)-հողամասին ամրակայված շենքերին, շինություններին տրված առանձին կադաստրային ծածկագրերն են, որոնք կազմված են եռանիշ թվերից և սկսվում է 001-ից:

8) Շենք-շինությունների առանձին միավորների ծածկագիր (Separate_Unit_Code)-շենքերի, շինությունների մաս հանդիսացող անշարժ գույքի առանձին միավորներին (բնակելի և ոչ բնակելի տարածքներին) տրվող և եռանիշ թվից բաղկացած ծածկագիրն է, որը սկսվում է 001-ից:

9) Շենք-շինությունների հարկայնությունը (Building_Floor)-ցույց է տալիս տվյալ շենքում առկա վերգետնյա հարկերի քանակը:

10) Շենք-շինությունների ավարտվածության աստիճան (Completion_stage_building)-ցույց է տալիս տվյալ շենք-շինության ավարտվածության աստիճանը: Այս դաշտում լրացվում է հետևյալ տվյալներից որևէ մեկը՝ ավերակ, անավարտ, մինչև 50%, 50-80%, 80% և ավելի:

11) Շենք-շինությունների վնասվածություն (Building_Damage)-ցույց է տալիս տվյալ շենք-շինությունների վնասվածության աստիճանը: Եթե շենքը վնասված չէ, այս դաշտը չի լրացվում և մնում է դատարկ:

12) **Տանիք (Roof)**-այստեղ ներկայացվում է տանիքի տեսակին վերաբերող տեղեկատվություն, թե ինչ նյութով է պատրաստված՝ կղմինդր, թիթեղ, թերթաքար (շիֆեր), այլ ջրամեկուսիչ նյութ:

13) **Միջհարկային ծածկի նյութ (Interfloor_roofing_material)**-ցույց է տալիս շենք-շինությունների միջհարկային ծածկի տեսակը՝ երկաթբետոն, փայտ, այլ նյութ:

14) **Կառուցման նյութ (Material)**-ցույց է տալիս շենք-շինությունների կառուցման շինանյութի տեսակը՝ բազալտ, տուֆ, երկաթբետոն, մետաղ, աղյուս կամ սնամեջ մանր բլոկ, փայտ, խամքար, կոպտատաշ քար, այլ տեսակի քար, հիմնակմախքային, խոշորապանել, խոշորաբլոկ:

15) **Երեսպատման նյութ (Material_Facade)**-ցույց է տալիս շենք-շինությունների երեսպատման նյութը՝ առանց արտաքին հարդարման, սրբատաշ, ապակեպատ, երեսպատված, սվաղած:

16) **Կառուցման տարեթիվ (Date)**-ցույց է տալիս շենք-շինությունների կառուցման տարեթիվը:

17) **Բնակարանների քանակ (Number_Apartments)**-այս դաշտը լրացվում է բազմաբնակարան շենքերի համար և նշվում է շենքում առկա բնակարանների ընդհանուր թիվը:

18) **Շենք-շինությունների բարձրություն (Height_Building)**-ցույց է տալիս շենք-շինությունների՝ գետնից ունեցած բարձրությունը՝ արտահայտված մ-ով:

19) **Բարձրություն (Elevation)**-ցույց է տալիս շենք-շինությունների տեղակայման վայրի (կենտրոնակետի) բարձրությունը ծովի մակարդակից:

20) **Ծավալ (Volume)**-ցույց է տալիս շենք-շինությունների ծավալը:

21) **Մակերես (Area)**-ցույց է տալիս շենք-շինությունների մակերեսը՝ արտահայտված մ²- ով:

22) **Պարագիծ (Perimeter)**- ցույց է տալիս շենք-շինությունների պարագիծը:

23) **Նպատակային նշանակություն (Purpose)**-ցույց է տալիս շենք-շինությունների նպատակային օգտագործման տեսակը (բնակելի, հասարակական, արտադրական):

24) **Գործառնական նշանակություն (Operational_Use)**-ցույց է տալիս շենք-շինությունների գործառնական օգտագործման տեսակը:

25) **Գործառնական նշանակության մանրամասներ (Operational_Use_Details)**- այստեղ ներկայացվում են շենք-շինությունների գործառնական նշանակության հետ կապված մանրամասներ:

26) **Հասցե (Address)**- ցույց է տալիս շենք-շինության հասցեն:

27) **ստորգետնյա հարկերի քանակ (Number_Floors_Below_Ground)**- ներկայացվում է ստորգետնյա հարկերի քանակը:

28) **Էլ. Էներգիա (Connection_Electricity)**-ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են էլ. էներգիայի սնուցման աղբյուրին, թե ոչ:

29) **Գազամատակարարում (Connection_Gas)**-ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները գազաֆիկացված են, թե ոչ:

30) **Կոյուղի (Connection_Sewage)**-ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են հանրային կոյուղու ցանցին, թե ոչ:

31) **Ջրագիծ (Connection_Water)**-ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են ջրամատակարարման ցանցին, թե ոչ:

32) **Միավորում/բաժանում (Join_Division)**-ներկայացվում է շենք-շինությունների միավորման կամ բաժանման մասին տեղեկատվություն:

18. Շենքերի, շինությունների ռեեստրի հիմնական աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Շենքեր, շինություններ շերտի հատկանիշներ» աղյուսակում (աղ. 1):

Աղյուսակ 1. Շենքեր, շինություններ շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code)	VarChar (35)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (3)
բնակավայրի (վարչական շրջանի) ծածկագիր (Community_Code)	VarChar (5)

Թաղամասի ծածկագիր (Block_Code)	VarChar (10)
Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)	VarChar (15)
Շենք-շինությունների ծածկագիր (Building_Code)	VarChar (25)
Շենք-շինությունների առանձին միավորների ծածկագիր (Separate_Unit_Code)	VarChar (25)
Շենք-շինությունների հարկայնությունը (Building_Floor)	Integer (2)
Շենք-շինությունների ավարտվածության աստիճան (Completion_stage_building)	VarChar (20)
Շենք-շինությունների վնասվածություն (Building_Damage)	VarChar (50)
Տանիք (Roof)	VarChar (50)
Միջհարկային ծածկի նյութ (Interfloor_roofing_material)	VarChar (20)
Կառուցման նյութ (Material)	VarChar (50)
Երեսապատման նյութ (Material_Facade)	VarChar (50)
Կառուցման տարեթիվ (Date)	Date
Բնակարանների քանակ (Number_Apartments)	Integer(3)
Շենք-շինությունների բարձրություն (Height_Building)	Double (3)
Բարձրություն (Elevation)	Double (3)
Ծավալ (Volume)	Double (3)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

Նպատակային նշանակություն (Purpose)	VarChar (50)
Գործառնական նշանակություն (Operational_Use)	VarChar (80)
Գործառնական նշանակության մանրամասներ (Operational_Use_Details)	VarChar (50)
Հասցե (Address)	VarChar (50)
Ստորգետնյա հարկերի քանակ (Number_Floors_Below_Ground)	Integer(2)
Էլ. էներգիա (Connection_Electricity)	Boolean
Գազամատակարարում (Connection_Gas)	Boolean
Կոյուղի (Connection_Sewage)	Boolean
Ջրագիծ (Connection_Water)	Boolean
Միավորում/բաժանում (Join_Division)	Boolean

19. Հողամաս-Հողի վերգերնյա և ստորգերնյա տարածքի մաս, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գրնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում: Հողամասերը հանդիսանում են «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում են որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով:

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id)
- 2) Կադաստրային ծածկագիր (Cadastrre_Code)
- 3) Մարզի ծածկագիր (Region_Code)
- 4) Բնակավայրի ծածկագիր (Community_Code)
- 5) Թաղամասի ծածկագիր (Block_Code)
- 6) Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)

7) **Հողամասի սահմանի տեսակ (Land_Border_Type)** ցույց է տալիս անշարժ գույքի միավորի՝ հողամասի սահմանների տեսակը, որը կարող է լինել մոտավոր, ճշգրիտ և վիճելի:

20. Մոտավոր են համարվում անշարժ գույքի սահմանների սխեմատիկ արտապատկերումները կադաստրային քարտեզների (հատակագծերի) վրա՝ առանց սահմանային ճշգրիտ չափագրումների:

21. Ճշգրիտ են համարվում անշարժ գույքի սահմանների շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների արտապատկերումը կադաստրային քարտեզների (հատակագծերի) վրա՝ իրենց ճշգրիտ սահմաններով և մակերեսով:

22. Վիճելի են համարվում այն սահմանները, որոնց արտացոլումը առաջացնում է կից սեփականության սուբյեկտների անհամաձայնությունը:

1) **Հողամասի չափված (հաշվառված) մակերես (Measured_Land_Area)**

2) **Հողամասի գրանցված մակերես (Calculated_Land_Area)**

3) **Պարագիծ (Perimeter):**

23. Հողամասերին վերաբերող հիմնական հատկանիշների աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Հողամասերի շերտի հատկանիշներ» աղյուսակում (աղ. 2):

Աղյուսակ 2. Հողամասեր շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer(10)
Կադաստրային ծածկագիր (Cadastr Code)	VarChar (35)
Մարզի ծածկագիր (Region Code)	VarChar (3)
Բնակավայրի ծածկագիր (Community Code)	VarChar (5)

Թաղամասի ծածկագիր (Block_Code)	VarChar (10)
Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)	VarChar (15)
Հողամասի սահմանի տեսակ (Land_Border_Type)	VarChar (10)
Հողամասի չափված մակերես (Measured_Land_Area)	Double (6)
Հողամասի հաշվարկված մակերես (Calculated_Land_Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

24. Կադաստրային թաղամաս- առանձնացված տարածք է, որը բնության մեջ սահմանազատվում է փողոցներով, ճանապարհներով, երկաթգծերով, գետերով, ջրանցքներով, բնական լանդշաֆտի կամ բնության մեջ հստակ առանձնացված (այդ թվում՝ հողամասերի) սահմաններով: Կադաստրային թաղամասը հանդիսանում է «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 3):

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id)
- 2) Կադաստրային ծածկագիր (Cadastrre_Code)
- 3) Մարզի ծածկագիր (Region_Code)
- 4) Բնակավայրի ծածկագիր (Community_Code)
- 5) Թաղամասի ծածկագիր (Block_Code)
- 6) Թաղամասի մակերես (Block_Area)
- 7) Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 3. Թաղամաս շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer(10)
Կադաստրային ծածկագիր (Cadastrre_Code)	VarChar (35)

Մարզի ծածկագիր (Region_Code)	VarChar (3)
Բնակավայրի ծածկագիր (Community_Code)	VarChar (5)
Թաղամասի ծածկագիր (BlockCode)	VarChar (10)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

**ԳԼՈՒԽ 3. «ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

25. «Գնահատում» տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերը.

- 1) տարածագնահատման գոտիականություն,
- 2) գնահատման շրջան,
- 3) գնահատման խումբ:

1) **Տարածագնահատման գոտիականություն-հողամասերի և շինությունների (գտնվելու վայրի) գոտի:** Տարածագնահատման գոտիականությունը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 1):

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id)

բ. Տարածագնահատման գոտու համար (Valuation _Zone_No) ցույց է տալիս տարածագնահատման գոտին: Առանձնացվում են ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի հողերի 20 տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիներ:

գ. Մակերես (Area)

դ. Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 1. Տարածագնահատման գոտիականություն շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer(10)
Տարածագնահատման գոտու համար (Valuation_Zone_No)	Integer(10)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

2) **Գնահատման շրջան**- գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման շրջաններ, որոնք հետևյալն են՝ Մերձարաքսյան, Ուրց Կոտայք-Շամիրամ, Կոտայք-Թալին, Վեդի-Ներքին Արփա, Ուրց-Վայոց ձոր, Ախուրյան-Սպիտակ, Աշոցք, Սևան, Ապարան-Հրազդան, Ներքին Դեբեդ-Աղստև, Վերին Դեբեդ-Աղստև, Փամբակ-Ներքին Ձորագետ, Վերին Ձորագետ, Սյունիք, Որոտան, Ալայան, Ենթալայան, Կիսաանապատային, Տափաստանային, Մարգագետնյատափաստանային, Անտառամարգագետնային:

Գնահատման շրջանը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 2):

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id)

բ. Գնահատման շրջանի անվանումը (Valuation_Region) ներկայացվում են գնահատման շրջանների անվանումները:

գ. Մակերես (Area)

դ. Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 3. Գնահատման շրջան շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer(10)
Գնահատման շրջան (Valuation_Region)	VarChar (35)

Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

3) **Գնահատման խումբ**- գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման խումբն է, և գյուղատնտեսական նշանակության բոլոր հողատեսքերը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի) դասակարգված են գնահատման 1-ից 5 խմբերի:

26. Գնահատման խումբը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 3):

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id)

բ. Գնահատման խմբի համար (Valuation_Group_No)

գ. Մակերես (Area)

դ. Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 3. Գնահատման խումբ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer(10)
Գնահատման խմբի համար (Valuation_Group_No)	Integer(10)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

ԳԼՈՒԽ 4. «ԻՐԱՎՈՒՆՔ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

27. «Իրավունք» տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերը.

- 1) սեփականության սուբյեկտ
- 2) սերվիտուտ
- 3) վարձակալություն (ենթավարձակալություն):

28. Սեփականության իրավունքի սուբյեկտ-ցույց է տալիս, թե անշարժ գույքը սեփականության իրավունքով ում է պատկանում: Սեփականության իրավունքի սուբյեկտը հանդիսանում է «**Իրավունք**» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 1):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Սեփականության իրավունքի սուբյեկտ (Ownership) ներկայացվում է թե տվյալ անշարժ գույքն ում սեփականության ներքո է գտնվում՝ պետության, համայնքի, ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների և ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

3) Մակերես (Area)

4) Պարագիծ (Perimeter)

Աղյուսակ 1. Սեփականության սուբյեկտ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Սեփականության սուբյեկտ (Ownership)	VarChar (35)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

5) Սերվիտուտ- Ուրիշի գույքից սահմանափակ օգտվելու իրավունք:

Սերվիտուտը հանդիսանում է «**Իրավունք**» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 2):

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id)

բ. Սերվիտուտի տեսակ (Right_Of_Way_Type) գույքային սերվիտուտը կարող է լինել կամավոր կամ հարկադիր:

գ. Մակերես (Area)

դ. Պարագիծ (Perimeter)

Աղյուսակ 3. Սերվիտուտ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Սերվիտուտի տեսակ (Right_Of_Way_Type)	VarChar (35)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

3) **Վարձակալություն (ենթավարձակալություն)**- Վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունք:

Վարձակալությունը (ենթավարձակալությունը) հանդիսանում է «**Իրավունք**» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 3):

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id)

բ. Վարձակալություն (ենթավարձակալություն) (Lease _sublease)

գ. Մակերես (Area)

դ. Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 3. Վարձակալություն (ենթավարձակալություն) շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)

Վարձակալություն (ենթավարձակալություն) (Lease _sublease)	VarChar (35)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

**ԳԼՈՒԽ 5. «ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ՀՈՂԱՏԵՍՔ)» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

29. Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք)-
Հողերի նպատակային նշանակությունը որոշակի նպատակների համար հողերի
օգտագործման և շահագործման պայմանների, հատկանիշների և առանձնահատկու-
թյունների համալիրն է, իսկ գործառնական նշանակությունը նորմատիվ իրավական
ակտերով, քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով ամրագրված
ֆիզիկական, որակական և նորմատիվային հատկանիշների համալիրն է, որը
ներառում է հողամասի թույլատրված օգտագործումների և դրանց փոփոխությունների
շրջանակը: Հողատեսքը գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն
հատկանիշների համալիրն է, որը բնութագրում է դրանց գործառնական օգտագործումը:

Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք) տարածական
(քարտեզագրական) շերտը ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ
հատկանիշներով (աղ. 1)

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Նպատակային նշանակություն (Purpose)

30. Ներկայացվում է հողերի նպատակային նշանակությունը (գյուղատնտեսական,
բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական,

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, հատուկ նշանակության, անտառային, ջրային, պահուստային հողերի):

1) Գործառնական նշանակություն (հողատեսք) (Operational_Use) ներկայացվում է հողերի գործառնական նշանակությունը (վարելահող, բազմամյա տնկարկ, խոտհարք, արոտավայր, այլ, բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման, արդյունաբերական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պահեստարանների, ընդերքի օգտագործման համար տրամադրված, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների, բնապահպանական, առողջարարական նպատակներով նախատեսված, հանգստի համար նախատեսված, պատմական և մշակութային, պաշտպանական, սահմանային, ռազմական, անտառների, թփուտ, գետ, բնական և արհեստական ջրամբար, հիդրոտեխնիկական օբյեկտների, ջրատնտեսային օբյեկտների, ավազուտ, ճահիճ և այլ անօգտագործելի):

2) Գործառնական նշանակության (հողատեսքի) մանրամասներ (Operational_Use_Details) այստեղ ներկայացվում են հողերի գործառնական նշանակության (հողատեսքի) հետ կապված մանրամասներ (տնամերձ, պտղատու այգի, գերեզմանոց, կորիզավոր, հնդավոր և այլն):

3) Ոռոգելիություն (Irrigation) ներկայացվում է երկու հիմնական տեսակով՝ ոռոգելի և չոռոգվող:

4) Մակերես (Area)

5) Պարագիծ (Perimeter):

Աղյուսակ 1. Հողերի նպատակային և գործառնական նշանակության շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Նպատակային նշանակություն (Purpose)	VarChar (20)

Գործառնական նշանակություն (հողատեսք) (Operational_Use)	VarChar (20)
Գործառնական նշանակության (հողատեսքի) մանրամասներ (Operational_Use_Details)	VarChar (20)
Ոռոգելիություն (Irrigation)	VarChar (15)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)

ԳԼՈՒԽ 6. «ՀԱՍՑԵՆԵՐ» ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԵԵՍՏՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Հասցեն վավերապայմանների (ռեկվիզիտ) որոշակիորեն համակարգված համախումբ է, որով միանշանակորեն որոշվում է հասցեավորման օբյեկտի տեղը բնակավայրում: Այն կարող է պարունակել հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, բնակավայր, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն), անշարժ գույքի հերթական համար: Հասցեն հանդես է գալիս նաև որպես տարածական կետային օբյեկտ, որը մարդուն ընթեռնելի կերպով նույնականացնում/սահմանում է գույքի (օբյեկտի) ամրագրված տեղադիրքը:

32. «Հասցեներ» բազային խմբի տարածական տվյալները հասցեների միասնական ռեեստրի հիմքն են, որը հանդիսանում է ՀՀ-ում գործող հասցեների պաշտոնական աղբյուր՝ տարբեր պետական և մասնավոր կառույցների, ֆիզիկական անձանց օգտագործման համար: Միաժամանակ, հասցեների էլեկտրոնային ռեեստրը հանդիսանում է տեղեկատվական գործիք, որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները կստանան նոր հասցեներ տրամադրելու, հասցեների ռեեստրում որոնումներ, հարցումներ կատարելու հնարավորություն:

33. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում.

1) ՀՀ ոստիկանությունը, ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը,

2) ՀՀ արդարադատության նախարարությունը (քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն (ՔԿԱԳ), իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, անձնական տվյալների պաշտպանության գործակալություն),

3) նոտարները, դատարանները,

4) ՀՀ նախարարությունները (արտակարգ իրավիճակների նախարարություն, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, պաշտպանության նախարարություն և այլն),

5) Տեղական ինքնակառավարման մարմինները:

34. Հասցեն ներկայացվում է որպես առանձին շերտ, քանի որ բազմաբնույթ տվյալներ, շերտեր աշխարհագրորեն կապված են հասցեի հետ, և այն համարվում է ուղղակիորեն կապող օղակ տվյալ շերտի/թեմայի տեղանքի և օգտագործողի միջև:

35. Այն օբյեկտները, որոնք կարող են ունենալ հասցեներ, կոչվում են **հասցեավորված օբյեկտներ**: Հասցեի տեղադիրքն առավել հաճախ որոշվում է նրանով, թե այն ինչպես է իդենտիֆիկացվում հարակից հասցեավորված օբյեկտների հետ:

36. **Հասցեավորման օբյեկտ**՝ հողամասեր, շենքեր, շինություններ և դրանց առանձին մասերը, որոնք հնարավոր է օգտագործել որպես անշարժ գույքի ինքնուրույն միավորներ՝ դրանց նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան:

37. **Հասցեավորվող օբյեկտ**՝ այն տարածական օբյեկտներն են, որոնց ասոցացումը հասցեի հետ ունի որոշակի իմաստ:

38. Հասցեավորման ընթացքում կարևոր է որոշել, թե տարածական որ օբյեկտները պիտի ունենան հասցե: Հասցե սովորաբար ունենում են իրական աշխարհում գոյություն ունեցող օբյեկտները: Սակայն հասցե կարող են ունենալ նաև պլանավորված/նախագծված, կառուցվող կամ պատմական օբյեկտները:

39. Էլեկտրոնային ռեեստրի տվյալների բազայում հասցեների բնութագրիչները ներկայացվում են մեկ հիմնական և 5 օժանդակ աղյուսակներով: Հիմնական աղյուսակը ռեյացիոն կապերով կապված է նաև այլ գերատեսչությունների և նախարարությունների

բազաներից ստացված հասցեների հետ, որոնք դիտարկվում են որպես «Հին հասցեների բազաներ»: Միաժամանակ, հասցեների հիմնական աղյուսակը ինֆորմացիա է ստանում տարածական շերտերից: Հասցեների էլեկտրոնային ռեեստրի բազայի ER (Entity – Relationship) դիագրամը ներկայացված է նկ. 1-ում:

40. Ստորև ներկայացված է տվյալների բազայում ընդգրկված տվյալների բնութագրիչների նկարագրությունը.

1) Հասցեի արտաքին նույնականացուցիչ (Id). պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս նույնականացուցիչի հիմնական նպատակը տարբեր աղբյուրների և հասցեի բաղադրիչների միջև կապ ապահովելն է:

2) Մարզի անվանում (Name of the region). «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված մարզի անվանում:

3) Բնակավայրի տեսակ. (Settlement_Type) այս տվյալի միջոցով ցույց է տրվում բնակավայրի տեսակը՝ քաղաք, գյուղ:

4) Համայնք (Community). համայնքները ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են: Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի (բնակավայրերի) հետ միասին, ընդգրկվում են համայնքների մեջ:

5) Բնակավայր (Settlement). բնակավայրը մշտական բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավոր է:

6) Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (Inland_geographical_Type).

Տվյալների բազայում առանձնացնում են հետևյալ հիմնական օբյեկտները.

ա. *թաղամաս*՝ բնակավայրի կառուցապատված տարածքի այն մասը, որը սահմանազատված է փողոցներով, հրապարակներով, նրբանցքներով և այլնով.

բ. *հրապարակ*՝ շենքերով և (կամ) փողոցներով շրջափակված, չկառուցապատված, բայց, ընդհանուր օգտագործման տարածք.

գ. *ճանապարհ*՝ բնակավայրի տրանսպորտային ցանցի մաս կազմող տարածք՝ նախատեսված տրանսպորտային միջոցների և մարդկանց շարժման համար:

7) Ճանապարհ (Thoroughfare_Prefix). Պողոտաներ, փողոցներ, նրբանցքներ, հրապարակներ, անցուղիներ, փակուղիներ և այլ գոյական կամ գոյականական բառակապակցությունները հանդիսանում են ճանապարհի տեսակներ կամ լրացյալներ: Տեսակների հետ պետք է անվանակոչվի և գործածվի սեռական-տրական հոլովաձև (օր Մաշտոցի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ):

Ճանապարհները, ըստ կարևորության, դասակարգվում են հետևյալ կերպ՝

ա. Մայրուղի՝ միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհ, որն իրար է միացնում քաղաքներ,

բ. Խճուղի՝ մեկ բնակավայրից սկսվող և մայրուղային ճանապարհով մեկ այլ բնակավայրի հետ կապվող ճանապարհ,


գ. Պողոտա՝ բնակավայրի առավել մեծ և լայն փողոց, որն իր երկայնքով պետք է ունենա պուրակներ, հետիոտնային անցումներ, մայթեր,

դ. Փողոց՝ բնակավայրի տրանսպորտային ցանցի մաս կազմող՝ տրանսպորտային միջոցների և մարդկանց շարժման համար նախատեսված տարածք,

ե. Նրբանցք՝ նեղ, ոչ լայն փողոց, որը միացնում է երկու և ավելի հարևան փողոցները և թույլ է տալիս փողոցից մուտք դեպի բակեր, ավտոտնակներ և այլն,

զ. Փակուղի՝ որևէ փողոցից սկսվող և վերջնամասում մեկ այլ երթևեկելի փողոցի չհատվող փողոց:

8) Ճանապարհի (թաղամասի, հրապարակի) անվանում (Thoroughfare_Name). հասցեների բաղադրիչի ենթատեսակ համարվող «Ճանապարհի անվանում»-ը ներկայացնում է մի վայրը մյուսին կապող ուղու, ճանապարհի անվանումը: Ամենատարածված օրինակներն են փողոցների, պողոտաների, խճուղիների անունները կամ նրբանցքների, փակուղիների, անցումների համարները: Այն բնակավայրերում, որտեղ չկան անվանումներ, փողոցները (պողոտաները և այլն) նշվում են թվերով:



Նկ. 1 Հասցեների էլեկտրոնային ռեեստրի բազայի ER (Entity – Relationship) դիագրամ

9) **Շենք-շինության կամ հողամասի համար (Building_land_No)** հասցեն ունի նույնականացուցիչ, որը թույլ է տալիս տարբերակել այն հարևան հասցեներից:

10) **Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (Real_Estate_Type)** նշվում է անշարժ գույքի օբյեկտի տեսակը՝ հողամաս, շենք, տուն, կառուցվող շենք կամ այլ գործառնական նշանակություն:

11) **Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի համար (Apartment_territory_No)** հասցեի նույնականացուցիչ, որը ցույց է տալիս բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի համարը:

12) **Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի տեսակ (Apartment_territory_Type)** նշվում է **Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի տեսակը**՝ բնակարան, ոչ բնակելի տարածք կամ այլ գործառնական նշանակություն:

13) **Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)** անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը:

14) **Հասցեի տրամադրման մասին որոշման ամսաթիվը (Date)** ցույց է տալիս այն ամսաթիվը, երբ հասցեի տվյալ տարբերակը դարձել է կամ կլինի վավեր իրական աշխարհում:

15) **Հասցեի տրամադրման մասին որոշման համարը (Decision_Number)** նշվում է այն հիմքը, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինը կատարել է հասցեի փոփոխություն կամ տրամադրել է նոր հասցե:

16) **Փոստային դասիչ (Postal_Code)** փոստային կապի օբյեկտին տրվող փոստային հասցեի պայմանական թվային նիշավորումն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և պարտադիր է փոստային կապի օպերատորների համար:

17) **X և Y կոորդինատներ (X_Coord., Y_Coord.):**

41. Հասցեի դիրքը ներկայացվում է փաստացի գտնվելու վայրի կենտրոնակետի կոորդինատներով՝ հնարավորինս ճշգրիտ: Առավել ճշգրիտ են լինում ուղղակիորեն տեղում վերցված կոորդինատները, կամ եթե օբյեկտը գոյություն չունի, ապա

կորորդինատը վերցվում է հասցեի բաղադրիչներից որևէ մեկից, առաջնահերթությունը տալով այն բաղադրիչին, որը թույլ է տալիս առավել ճշգրիտ որոշել տեղադիրքը: Եթե հասցեն ունի մեկից ավելի տեղադիրք, ապա բնորոշող հատկանիշը պետք է լրացվի յուրաքանչյուրի համար առանձին և տարբեր արժեքով: Հասցեների էլեկտրոնային ռեեստրի հիմնական աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Հասցե (Addresses)» աղյուսակում (աղ.2): Օժանդակ աղյուսակները ներկայացված են «Մարզ (Marz)» (աղ.3), «Բնակավայրի տեսակ (Settlement_Type)» (աղ. 4), «Բնակավայր (Settlement)» (աղ. 5), Համայնք (Community)(աղ. 6), «Ճանապարհի/թաղամասի տեսակ (Thoroughfare_Prefix)» (աղ. 7), «Ճանապարհի/թաղամասի անվանում (Thoroughfare_Name)» (աղ. 8) աղյուսակներում, «Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (Real_Estate_Type)» (աղ. 9):

Տարածական (քարտեզագրական) շերտերը ներկայացված են «Կադաստրային ծածկագիր» (աղ. 9), և «Փոստային դասիչ» (աղ. 10) աղյուսակներում, որտեղից ավտոմատ կերպով ստացվում են համապատասխան արժեքները:

Աղյուսակ 2. Հասցեներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Բնակավայրի տեսակ (Settlement_Type)	VarChar (15)
Համայնք (Community)	VarChar (50)
Բնակավայր (Settlement)	VarChar (50)
Ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (Inland_geographical_Type)	VarChar (50)
Ճանապարհի տեսակ (Thoroughfare_Prefix)	VarChar (50)

Ճանապարհի անվանում (Thoroughfare_Name)	VarChar (50)
Շենք-շինության կամ հողամասի համար (Building_land_No)	VarChar (15)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (Real_Estate_Type)	VarChar (15)
Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի համար (Apartment_territory_No)	VarChar (15)
Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի տեսակ (Apartment_territory_Type)	VarChar (15)
Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)	VarChar (35)
Հասցեի տրամադրման մասին որոշման ամսաթիվ (Date)	Date
Հասցեի տրամադրման մասին որոշման համար (Decision_No)	VarChar(8)
Փոստային ինդեքս (Postal_Code)	Integer(3)
X կոորդինատ (X_coord)	Double(10)
Y կոորդինատ (Y_coord)	Double(10)

Աղյուսակ 3. Մարզ (Marz)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer(2)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar(15)

Աղյուսակ 4. Բնակավայրի տեսակ (Settlement_Type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Բնակավայրի տեսակի նույնականացուցիչ (Set_Type_Id)	Integer(1)

Բնակավայրի տեսակ (Set_Type)	VarChar(5)
-----------------------------	------------

Աղյուսակ 5. Բնակավայր (Settlement)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Բնակավայրի նույնականացուցիչ (Settlement_Id)	Integer(4)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar(15)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer(2)

Աղյուսակ 6. Համայնք (Community)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Համայնքի նույնականացուցիչ (Community_Id)	Integer(4)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (15)

Աղյուսակ 7. Ճանապարհի տեսակ (Thoroughfare_Prefix)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ճանապարհի/թաղամասի տեսակի նույնականացուցիչ (Thoroughfare_Type_Id)	Integer(1)
Ճանապարհի/թաղամասի տեսակ (Thoroughfare_Type)	VarChar(15)

Աղյուսակ 8. Ճանապարհի (թաղամասի, հրապարակի) անվանում (Thoroughfare_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ճանապարհի նույնականացուցիչ (Thoroughfare_Id)	Integer(10)

Տեսակի նույնականացուցիչ (Type_Id)	Integer(10)
Ճանապարհի անվանում (Thoroughfare_Name)	VarChar(30)

Աղյուսակ 9. Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (Real_Estate_Type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (Real_Estate_Type_Id)	Integer(2)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (Real_Estate_Type)	VarChar(30)

Աղյուսակ 10. Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Կադաստրային ծածկագրի նույնականացուցիչ (Cadastral_Code_Id)	Integer(10)
Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)	VarChar(15)

Աղյուսակ 11. Փոստային դասիչ (Postal_Code)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Փոստային նույնականացուցիչ (Postal_ID)	Integer (4)
Փոստային դասիչ (Postal_Code)	VarChar(5)

42. Այլ գերատեսչությունների կամ նախարարությունների կողմից կազմված տվյալների բազաների հետ կապը հաստատվում է ռեյացիոն կապերով «ID» դաշտի միջոցով: Այս բազաներն օգտագործվելու են հին հասցեների ճշգրտման, ինչպես նաև հին անվանումներով հասցեների փնտրման ժամանակ:

ԲԱԺԻՆ II. ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

ԳԼՈՒԽ 7. «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

43. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի տարածական տվյալները համարվում են ռեֆերենց, այսինքն՝ տվյալներ, որոնք կազմում են տարածական շրջանակ՝ ճանաչելու աշխարհագրական օբյեկտի դիրքը, ինչպես նաև կապում և (կամ) մատնանշում են այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են բազային և թեմատիկ խմբերի տարածական տվյալներին: Աշխարհագրական անվանումները լայնորեն կիրառվում են ամենօրյա հաղորդակցության մեջ, վեր-ծառայություններում (ներառյալ գեոպորտալներ) տեղեկատվություն որոնելու, տեղադիրքի վերաբերյալ թեմատիկ տեղեկատվությանը հղում կատարելու, քարտեզների և հատակագծերի վրա աշխարհագրական տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև նախկինում հավաքագրված տարածական տվյալները մշակելու համար: Աշխարհագրական օբյեկտն աշխարհագրական որոշակի դիրքով ամբողջական և համեմատաբար կայուն կազմավորում է, որն ունի բնական կամ արհեստական ծագում: Իսկ աշխարհագրական օբյեկտի անվանումը (աշխարհագրական անվանումը) աշխարհագրական օբյեկտը ճանաչելու և առանձնացնելու նպատակով տրվող հատուկ անուն է:

44. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի տարածական տվյալների ստեղծման հիմնական նպատակը՝ բացառել տվյալների իրարամերժությունը, նվազեցնել տարածական տվյալների հետ կապված ծախսերը՝ միաժամանակ ավելացնելով տվյալների մատչելիության աստիճանը, միասնական տեղեկատվական հենքի միջոցով բարձրացնել որոշումների կայացման օպերատիվությունը:

45. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

46. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի քարտեզագրական շերտը ներկայացված է հետևյալ հատկանիշներով (աղ. 1, 2):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id) պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Եզակի նույնականացուցիչը չի փոփոխվում տարածական օբյեկտի գոյության ընթացքում:

2) X և Y կոորդինատներ (X_Coord., Y_Coord.) ներկայացվում է աշխարհագրական օբյեկտի դիրքը՝ փաստացի գտնվելու վայրի կենտրոնակետի կոորդինատներով:

3) Թերթի համար (List_Number) ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական օբյեկտի գտնվելու վայրի տեղագրական 1:25000 նոմենկլատուրայի թերթի համարը:

4) Սկզբի ամսաթիվ (Start_Date) ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ աշխարհագրական անվանման մուտքագրման կամ, որ նույնն է, կիրառության մեջ դնելու ամսաթիվը:

5) Վերջին ամսաթիվ (End_Date) ցույց է տալիս տվյալների բազայում մուտքագրված տվյալ աշխարհագրական անվանման հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

6) Դիտարկման նվազագույն լուծաչափ/մասշտաբ (Least_Detailed_Resolution) լուծաչափ, որից ավելի մեծ մասշտաբի դեպքում օբյեկտներին տրված անվանումներն այլևս չպետք է ցուցադրվեն դիտարկման հիմնական պատուհանի մեջ: Օր. երբ նախատեսված է, որ նշված անվանումները պետք է երևան 1:500000-ից մեծ մասշտաբի դեպքում, ապա այս դաշտում կլրացվի 500000 արժեքը: Այն օբյեկտների

անվանումների դեպքում, երբ ցուցադրման սահմանափակում չի նախատեսվում ապա այս դաշտում արժեք չի լրացվում:

7) Դիտարկման առավելագույն լուծաչափ/մասշտաբ (Most_Detailed_Resolution) լուծաչափ, որից ավելի փոքր մասշտաբի դեպքում օբյեկտներին տրված անվանումները այլևս չպետք է ցուցադրվեն դիտարկման հիմնական պատուհանի մեջ: Մեծ տարածական ընդգրկում ունեցող օբյեկտների անվանումները, ինչպես, օրինակ, լեռնաշղթաների անվանումները, կարող են չպատկերվել 1:10000 մասշտաբից մեծ մասշտաբների դեպքում, այդ պարագայում այս դաշտում կլրացվի 10000 արժեքը: Այն օբյեկտների անվանումների դեպքում, երբ ցուցադրման սահմանափակում չի նախատեսվում, ապա համար այս դաշտում արժեք չի լրացվում:

8) Անվանում (Name) ցույց է տալիս օբյեկտին տրված աշխարհագրական անվանումը: Ընդ որում, քանի որ ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանումները տրվում են հայոց լեզվով, ապա այս դաշտում անվանումը լրացվում է հայերենով:

9) Հին անվանում (Old_Name) աշխարհագրական օբյեկտին տրված անվանում, որը փոխարինվել կամ հեռացվել է տարածական տվյալների բազայից: Այս դաշտում ևս անվանումը լրացվում է հայերենով:

10) Անվանման աղբյուրը (Name_Source) այստեղ ներկայացվում է աշխարհագրական անվանման ծագման աղբյուրը, թե որտեղից է վերցված (օր. գազետիր): Աշխարհագրական օբյեկտների անվանումները բացահայտվում են քարտեզների, տպագիր կամ ձեռագիր աղբյուրների վերլուծության, տեղացիների, մասնագետների տեղեկատվության, հարցումների և այլ աղբյուրների միջոցով:

11) Լատինատառ անվանում (Transliterate_Name) և լատինատառ հին անվանում (Old_Transliterate_Name) միջազգային օգտագործման համար նախատեսված փաստաթղթերում, քարտեզներում և այլ նյութերում աշխարհագրական անվանումները փոխանցվում են լատիներեն այբուբենի տառերով (այդ թվում նաև անգլերենով)՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն: Ուստի այս 2 հատկանիշները ցույց կտան աշխարհագրական օբյեկտի գործող և հին անվանումները՝ գրված լատինատառ:

12) **Ռուսերեն անվանում (Russian_Name)** աշխարհագրական օբյեկտի անվանումը ռուսերենով:

13) **Աշխարհագրական օբյեկտի տեսակը (Object_Type)** ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական օբյեկտի տեսակը (օրինակ՝ գետ, լիճ, լեռ և այլն):

14) **Անվան կարգավիճակ (Name_Status)** ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական անվանման կարգավիճակը (պատմական, պաշտոնական տրված, տեղացիների կողմից օգտագործվող և այլն):

15) **Արտասանություն (Pronunciation)** ներկայացվում է աշխարհագրական անվանման արտասանության համապատասխան եղանակը: Այս դաշտում կարելի է տեղադրել անգամ արտասանության աուդիո տարբերակ կամ հղում դեպի այդ աուդիո տարբերակը:

16) **Մարզի անվանում (Name of the region)** ցույց է տալիս այն մարզի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

17) **Համայնքի անվանում (Community_Name)** ցույց է տալիս այն համայնքի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

18) **Բնակավայրի անվանում (Settlement_Name)** ցույց է տալիս այն բնակավայրի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

Աղյուսակ 1. Աշխարհագրական անվանումներ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
X կոորդինատ (X_Coord.)	Double (10)
Y կոորդինատ (Y_Coord.)	Double (10)
Թերթի համար (List_Number)	VarChar (15)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date

Վերջին ամսաթիվ (End_Date)	Date
Դիտարկման նվազագույն լուծաչափ (Least_Detailed_Resolution)	Integer (8)
Դիտարկման առավելագույն լուծաչափ (Most_Detailed_Resolution)	Integer (8)
Անվանում (Name)	VarChar (50)
Հին անվանում (Old_Name)	VarChar (50)
Անվանման աղբյուրը (Name_Source)	VarChar (50)
Լատինատառ անվանում (Transliterate_Name)	VarChar (50)
Լատինատառ հին անվանում (Old_Transliterate_Name)	VarChar (50)
Ռուսերեն անվանում (Russian_Name)	VarChar (50)
Աշխարհագրական օբյեկտի տեսակ (Object_Type)	VarChar (30)
Անվան կարգավիճակ (Name_Status)	VarChar (50)
Արտասանություն (Pronunciation)	Ole Object
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (50)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (50)

ԳԼՈՒԽ 8. «ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

47. Մակերևութային ջրեր՝ ջուր (առուներ, գետեր, լճեր, լճակներ, գերխոնավ տարածքներ, ձնածածկույթներ, սառցադաշտեր), որը հոսում է կամ հավաքվել է երկրի մակերևութի վրա: Մակերևութային ջրերի տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ արդյունավետ կառավարում, քարտեզագրում, մոդելավորում իրականացնելու համար:

48. Մակերևութային ջրերի տարածական տվյալների խմբի մեջ մտնող տարածական շերտերը ներկայացնում են իրական աշխարհի հետևյալ օբյեկտները.

- 1) Գետեր
- 2) Լճեր
- 3) Ջրամբարներ:

49. Այս երեք տարածական շերտերը ներկայացված են գծային և պոլիգոնային տեսքով:

1) **Գետը** է կոչվում երկրի մակերևութով, իր կողմից մշակված բնական հունով հոսող մշտական ջրհոսքը: Գետերին վերաբերող տարածական շերտը ներկայացվում է գծային կամ պոլիգոնային տեսքով:

2) **Ջրամբարն** արհեստական ջրային մարմին է, որը նախատեսված է ջուրը կուտակելու և պահելու համար: Ջրամբարներին վերաբերող տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով:

3) **Լիճը** երկրի մակերևութի ջրով լցված գոգավորություն է, որը կապված չէ օվկիանոսի կամ ծովի հետ: Լճերին վերաբերող տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով:

50. Մակերևութային ջրերի տարածական տվյալների բազան ծառայում է մի քանի ընդհանուր նպատակների.

- 1) Տեղանքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու, տեղանքում կողմնորոշվելու,
- 2) Հիդրոգրաֆիայի հետ կապված բազային քարտեզներ ստեղծելու,

3) Որոշակի մոդելներ ստեղծելու,

4) Հիդրոգրաֆիական ցանցի վերաբերյալ տեղեկատվության շարունակականության պահպանման համար՝ տեղադիրքային առումով և տրամաբանորեն:

51. Ստորև ներկայացված է տվյալների բազայում ընդգրկված տվյալների բնութագրիչների նկարագրությունը:

52. **Գետային** շերտի համար կիրառելի են հետևյալ հատկանիշները (աղ. 1):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id) օբյեկտի արտաքին նույնականացուցիչը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս նույնականացուցիչի հիմնական նպատակը տարբեր աղբյուրների և մակերևութային ջրային օբյեկտի բաղադրիչների միջև կապ ապահովելն է:

2) Անվանում (Name) հատուկ գոյական անուն, որը կիրառվում է իրական աշխարհի օբյեկտի համար: Աշխարհագրական անունն օգտագործվում է իրական աշխարհում հիդրոգրաֆիական օբյեկտը որոշելու համար: Այն եզակի հիդրոլոգիական նույնականացուցիչ է և կարող է օգտագործվել որպես «բանալի» տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով:

3) Երկարություն (Length) նախատեսված է գետի կամ գետահատվածի երկարությունը գրանցելու համար: Ընդունված է գետի երկարության չափման միավոր համարել կմ-ը, ուստի աղյուսակում երկարությունը տրված կլինի կմ-ով:

4) Ամիս և ամսաթիվ (Date) այս դաշտում գրվում է տվյալների բազայում տվյալի մուտքագրման կամ փոփոխման ամսաթիվը:

53. **Լճերի** շերտի համար կիրառելի են հետևյալ հատկանիշները (աղ. 2):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Անվանում (Name)

3) Բարձրություն (Elevation) սա ցույց է տալիս ջրային օբյեկտի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը:

4) **Մակերես (Area)** լճի հայելու մակերեսն է, որը, ավերով ու մակարդակով պայմանավորված, կարող է տատանվել: Կարելի է վերցնել միջինացված որևէ արժեք:

5) **Միջին խորություն (Average_Depth)** հաշվարկային ցուցանիշ է, որն ստացվում է լճի ջրի ծավալի և մակերեսի հարաբերակցությունից:

6) **Առավելագույն խորություն (Max_Depth)** լճի հայելու մակերևույթից մինչև դրա հատակը եղած առավելագույն, ուղղահայաց հեռավորությունն է:

54. **Ջրամբարների** շերտի համար կիրառելի են հետևյալ հատկանիշները (աղ. 3):

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id)**

2) **Անվանում (Name)**

3) **Շահագործման ամսաթիվ(Start_Date)** ցույց է տալիս ջրամբարի շահագործման տարեթիվն ու ամսաթիվը:

4) **Մակերես (Area)**

5) **Ծավալ (Volume)** ցույց է տալիս ջրամբարի ընդհանուր ծավալը:

6) **Շահագործումից հանելու ամսաթիվ (End_Date)** ցույց է տալիս ջրամբարի շահագործումը դադարեցնելու տարեթիվն ու ամսաթիվը:

55. Հիդրոգրաֆիական ցանցի տարրերը քիչ հատկանիշներ ունեն, և նախատեսված է, որ, անհրաժեշտության դեպքում, օգտագործողները կարող են ընդլայնել այն:

Աղյուսակ 1. Գետեր շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Գետի անվանում (Name)	VarChar (20)
Գետի երկարություն (Length)	Double(4)
Ամիս և ամսաթիվ (Date)	Date

Աղյուսակ 2. Լճեր շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
-----------------------------	--------------------------

Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Լճի անվանում (Name)	VarChar (20)
Բարձրություն (Elevation)	Double (3)
Մակերես (Area)	Double(6)
Միջին խորություն (Average_Depth)	Double (3)
Առավելագույն խորություն (Max_Depth)	Double (3)

Աղյուսակ 3. Ջրամբարներ շերտի հատկանիշներ

Գաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Ջրամբարի անվանում (Name)	VarChar (20)
Շահագործման ամսաթիվ (Start_Date)	Date
Մակերես (Area)	Double(6)
Ծավալ (Volume)	Double(3)
Շահագործումից հանելու ամսաթիվ (End_Date)	Date

56. Տվյալները պիտի համապատասխան են հետևյալ տոպոլոգիական կանոններին՝

1) Գետերը պետք է ունենան հոսքի ճիշտ ուղղություն, այսինքն՝ պիտի թվայնացված լինեն՝ պահպանելով ակունքից գետաբերան սկզբունքը:

2) Ջրային հոսքերը պետք է հատվեն այնտեղ, որտեղ կապ գոյություն ունի իրենց ներկայացրած իրական աշխարհի երևույթների միջև, այսինքն՝ այն դեպքում պիտի հատվեն, երբ հնարավոր է ջրի անցումը մեկ տեղից մյուսը:

3) Գետերը չպետք է խաչվեն:

4) Լճերի և ջրամբարների դեպքում անհրաժեշտ է, որ դրանք վրադրումներ և միմյանց հետ հատումներ չունենան:

5) Կարևոր է տեղադիրքային ճշտությունը, որը որոշվում է չափված և իրական տեղադիրքերի տարբերությամբ, և այդ տարբերությունը պիտի հնարավորինս փոքր լինի:

**ԳԼՈՒԽ 9. «ՊԼԱՆԱԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ ՀԻՄՔ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

57. «Պլանաբարձունքային հիմք» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ միասնական պետական ռազմավարություն և արդյունավետ կառավարում, քարտեզագրում, մեծ ճշգրտությամբ տվյալների ստացում ապահովելու, ինչպես նաև իրական ժամանակում ավտոմատացված, բազմաչափ, բազմաշերտ տեղեկատվական համակարգ ունենալու համար:

58. Պլանաբարձունքային հիմքին վերաբերող տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

1) հիմք են հանդիսանում թե տեղագրական հանույթների և թե ռազմական պաշտպանողական խնդիրներ լուծելու համար,

2) ապահովում են արբանյակային տեխնոլոգիաների, նավիգացիոն միջոցների և թվային կապի միջոցների կիրառումով ստացվող տվյալների մեծ ճշգրտություն,

3) թույլ են տալիս իրականացնել տրանսպորտային միջոցների և այլ շարժական օբյեկտների աշխատանքի օպտիմալացում և դրանով իսկ լուծել տնտեսության տարբեր բնագավառներում մի շարք կառավարչական խնդիրներ:

59. Այս տվյալների օգտագործողներն են հանդիսանում բոլոր նախարարությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

60. Պլանաբարձունքային հիմք տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական շերտերը՝ պլանային հիմք, բարձունքային հիմք, պիկետներ:

61. *Պլանային հիմք*-ներկայացվում է որպես կետային շերտ, որտեղ ներկայացվում են գեոդեզիական ցանցի կետերը: Պլանային ցանցերի կետերը, համաձայն ընդունված ռեֆերենս էլիպսոիդի, որոշված են գեոդեզիական կամ հարթ-ուղղանկյուն կոորդինատներով: Պետական պլանային գեոդեզիական ցանցերը կառուցվում են եռանկյունավորմամբ, պոլիգոնումետրիայով և տրիլատերացիայով:

62. ՀՀ տարածքում GNSS արբանյակային դիրքորոշման ընդունիչներով դիտարկված WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված Ազգային գեոդեզիական ցանցի /0-ական դասի-5, 1-ին դասի-41, 2-րդ դասի-1069/ կետերը հավասարակշռվել, և կոորդինատները հաշվարկվել են (ITRF2008/IGS08) ստանդարտ միջազգային ռեֆերենս շրջանակներում:

63. Պլանային հիմքին վերաբերող հատկանիշներն են (ադ. 1):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id) օբյեկտի արտաքին իդենտիֆիկատորը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով:

2) Տեսակ (Type) այստեղ նշվում է թե տվյալ կետն ինչ տեսակի է՝ գեոդեզիական կետ, մշտական գործող ռեֆերենս կայան:

3) Գեոդեզիական ցանցի դաս (Geodetic_Class) ցույց է տալիս՝ գեոդեզիական ցանցի 0-ական, 1-ին թե 2-րդ դասի է:

4) Բարձրություն (Elevation) ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով:

5) Անվանում (Name) ցույց է տալիս գեոդեզիական ցանցի տվյալ կետի անվանումը:

6) Սկզբի ամսաթիվ (Start_Date) այստեղ նշվում է տվյալ գեոդեզիական կետի կամ ռեֆերենս կայանի ստեղծման ամսաթիվը:

7) **Վերջի ամսաթիվ (End_Date)** այստեղ նշվում է տվյալ գեոդեզիական կետի կամ ռեֆերենս կայանի՝ շահագործումից դուրս գալու ամսաթիվը:

Աղյուսակ 1. Պլանային հիմք

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Տեսակ (Type)	VarChar (20)
Գեոդեզիական ցանցի դաս (Geodetic_Class)	VarChar (20)
Բարձրություն (Elevation)	Double (3)
Անվանում (Name)	VarChar (20)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջի ամսաթի (End_Date)	Date

64. *Բարձունքային հիմք*- ներկայացնում է բարձունքային ցանցերը, որոնք այն հենանիշերից, դրոշմանիշերից են կազմված, որոնց համար որոշված են բարձրությունները՝ սկզբնական մակերևույթի նկատմամբ: Պետական բարձունքային գեոդեզիական ցանցերը կառուցվում են երկրաչափական, եռանկյունաչափական և բարոմետրական նիվելիրացմամբ:

65. ՀՀ տարածքում գիտական և գործնական աշխատանքների իրականացման համար գլխավոր բարձունքային հիմք են հանդիսանում I և II դասի նիվելիրային ցանցերը: Պետական նիվելիրային ցանցերն անհրաժեշտ են կատարվող բոլոր մասշտաբի տեղագրական հանույթների և գեոդեզիական չափումների համար, որոնք բավարարում են տնտեսության, աստղագեոդեզիական, աերոտիեզերահանույթային աշխատանքների և պաշտպանության պահանջները:

66. Այստեղ բարձունքային հիմքին վերաբերող շերտը ներկայացվում է գծային և կետային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 2):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Դաս (Type) այստեղ նշվում է նիվելիրային ցանցերի դասը՝ I և II դասի:

3) Հավասարակշռման ամսաթիվ (Balance Date) ներկայացվում է հավասարակշռման ամսաթիվը:

4) Բարձրություն (Elevation) ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով:

Աղյուսակ 2. Բարձունքային հիմք

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Դաս (Type)	VarChar (20)
Հավասարակշռման ամսաթիվ (BalanceDate)	Date
Բարձրություն (Elevation)	Double (3)

67. *Պիկետներ*-տեղանքի բնորոշիչ կետեր են: Բարձունքային կետերը (պիկետները), որոնք անհրաժեշտ են ռելիեֆի պատկերման համար, որոշվում են հիմնական և հանույթային ընթացքների, ինչպես նաև գեոդեզիական հիմքի կետերից: Կախված հանութագրվող տարածքի մասշտաբից և ռելիեֆի անկումից՝ սահմանված են պիկետների միջև եղած առավելագույն հեռավորության թույլատրելի չափեր՝ արտահայտված մ-ով: Պիկետներին վերաբերող շերտը կետային տեսակի է՝ հետևյալ հատկանիշներով (աղ. 3):

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Բարձրություն (Elevation) ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով:

3) Անվանում (Name) ցույց է տալիս պիկետի անվանումը:

Աղյուսակ 3. Պիկետներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
-----------------------------	--------------------------

Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Բարձրություն (Elevation)	Double (3)
Անվանում (Name)	VarChar (20)

**ԳԼՈՒԽ 10. «ՌԵԼԻՖ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

68. «Ռելիեֆ» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ արդյունավետ կառավարում, քարտեզագրում, մոդելավորում իրականացնելու համար:

69. Ռելիեֆին վերաբերող տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

1) Պարունակում են հանրային հատվածի համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն,

2) Տեղեկատվությունը կիրառելի է կառավարման բոլոր մակարդակներում,

3) Տեղեկատվությունն իրենից ներկայացնում է կառուցվածք, որը ժամանակի ընթացքում համեմատաբար կայուն է,

4) Հանդիսանալով տարածական տվյալների ենթակառուցվածքի մի մաս, տվյալները կարող են կիրառվել այլ տարածական տվյալների հետ:

70. Այս տվյալների օգտագործողներն են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

71. Տեղանքի ռելիեֆն իրենից ներկայացնում է Երկրի վրա գտնվող, ձևով և ծագումով իրարից տարբեր բոլոր անհարթությունների ամբողջություն: Ռելիեֆին վերաբերող տվյալները հաճախ օգտագործվում են որպես մուտքային տվյալներ՝ տարածական վերլուծություններ կատարելիս կամ այլ թեմաներին վերաբերող

տվյալների (օրինակ՝ հիդրոգրաֆիա, տրանսպորտային ցանց, անշարժ գույք և այլն) ցուցադրման ժամանակ՝ կիրառական և նպատակային տարբեր արդյունքներ ստանալու համար:

72. «Ռելիեֆ» տարածական տվյալների խմբի մեջ ներառված են ինչպես վեկտորային, այնպես էլ ռաստերային տվյալներ: Այդ տվյալները ներկայացված են հետևյալ տարածական շերտերով.

- 1) Իզոգծեր (հորիզոնականներ)
- 2) Բարձունքային կետեր
- 3) Ռելիեֆի թվային մոդել (ՌԹՄ/DTM):

73. **Իզոգիծ (հորիզոնական)**- միևնույն արժեքներ ունեցող կետերը միացնող սահուն-կոր գծերը (բարձրության, խորության և այլն): Իզոգծերը ներկայացված են որպես գծային շերտ՝ հետևյալ հատկանիշներով.

1) Արտաքին նույնականացուցիչ (Id) օբյեկտի արտաքին իդենտիֆիկատորը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով:

2) Բարձրություն (Elevation) այս արժեքը չափվում է երկրի ձգողական դաշտին հակառակ ուղղությամբ՝ դեպի վեր ուղղությամբ: Ցույց է տալիս բացարձակ բարձրությունը՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ արտահայտված մ-ով:

3) Խորություն (Depth) ցույց է տալիս մակերևույթային ջրային օբյեկտի խորությունը, որը չափվում է երկրի ձգողական դաշտի ուղղությամբ, արտահայտված մ-ով:

74. Հորիզոնականներին վերաբերող հիմնական հատկանիշների աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Իզոգծեր շերտի հատկանիշներ» աղյուսակում (աղ. 1):
Աղյուսակ 1. Իզոգծեր շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)

Բարձրություն (Elevation)	Integer(10)
Խորություն (Depth)	Integer(10)

75. *Բարձունքային կետեր*-ռելիեֆի լիարժեք պատկերը ստանալու համար քարտեզների վրա 0.1 մ ճշտությամբ տրվում են տեղանքի բնորոշ կետերի՝ լեռների և բլուրների, ջրբաժանների, լեռնանցքների, թամբարդների բարձր կետերի, գոգավորության և ձորակների համեմատաբար ցածր կետերի, ինչպես նաև կողմնորոշիչ հանդիսացող կետերի բարձունքային սիշերը: Այս տվյալները ներկայացնող շերտը կետային տեսակի է և ունի հետևյալ հիմնական հատկանիշները (աղ. 2).

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Բարձրություն (Elevation)

3) Անվանում (Name)

76. Ցույց է տալիս տեղանքի բնորոշ կետերին տրված աշխարհագրական անվանումը, եթե այդպիսիք առկա են (օր. լեռնագագաթ, լեռնանցք և այլն):

Աղյուսակ 2. Բարձունքային կետեր շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Բարձրություն (Elevation)	Integer(10)
Անվանում (Name)	VarChar (50)

77. *Ռելիեֆի թվային մոդելներ (ՌԹՄ/DTM)*- եռաչափ մաթեմատիկական մոդելների հատուկ տեսակ են, որոնք ներկայացնում են երկրի մակերևույթի իրական, եռաչափ ձևը: ՌԹՄ-ն իրենից ներկայացնում է ռաստրային շերտ, որը ներկայացված է պիքսելներից կազմված պունակներով և տողերով: Յուրաքանչյուր պիքսել ունի համապատասխան արժեք, որը ցույց է տալիս ռելիեֆի բարձրության սիշը:

78. ՌԹՄ-ին վերաբերող տեղեկատվությունը, ի տարբերություն վեկտորային քարտեզագրական շերտերի, մուտքագրվելու և պահպանվելու է մետատվյալների ֆայլում: ՌԹՄ-ին կից ներկայացվող մետատվյալների ֆայլում ներկայացվելու են հետևյալ անհրաժեշտ մետատվյալները.

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Անվանում (Name) ռելիեֆի թվային մոդելի անվանումն է ներկայացվում:

3) Ստեղծման աղբյուր (Source) ներկայացվում է ՌԹՄ-ի ստեղծման աղբյուրը:

4) Տարածական լուծաչափ (Resolution) ներկայացվում է ՌԹՄ-ի լուծաչափը կամ որ նույնն է, պիքսելի մեծության չափը:

5) Պիքսելի տեսակ (Pixel_Type) այստեղ տրվում է տեղեկատվություն պիքսելի տեսակի մասին (օր. Floating, Signed, Unsigned): Պիքսելի տեսակով է պայմանավորված այն արժեքների տիրույթը, որը կարող է արտահայտել ռաստերային պատկերը:

6) Պրոյեկցիա (Projection) այս դաշտում ներկայացվում է տեղեկատվություն պրոյեկտման մասին: Եթե պրոյեկտված է տվյալը, ապա գրվում է նաև օգտագործված պրոյեկցիան:

7) Տվյալ տրամադրող (Provider) ներկայացվում է տվյալ տրամադրող կազմակերպության վերաբերյալ տեղեկատվություն: Հաճախ նշվում են նաև կոնտակտային անձի տվյալները:

8) Սկզբի ամսաթիվ (Start_Date) նշվում է ՌԹՄ-ի ձեռքբերման ամսաթիվը:

9) Վերջին ամսաթիվ (End_Date) նշվում է ՌԹՄ-ի թարմացման կամ փոփոխման ամսաթիվը:

10) Համառոտ բովանդակություն (Summary) ըստ անհրաժեշտության՝ ներկայացվում է համառոտ նկարագրություն ՌԹՄ-ին վերաբերող հավելյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

79. **Վեկտորային տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ տոպոլոգիական կանոններին.**

1) Պետք է բացառվեն իզոլացված վերադրման դեպքերը:

2) Յուրաքանչյուր իզոգիծ պետք է ներկայացնի բացառապես բարձրության մեկ նիշ և չունենա հատումներ ու ճյուղավորումներ:

**ԳԼՈՒԽ 11. «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹՎԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

80. «Տրանսպորտային ցանց» բազային խմբի տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակն է տվյալների իրարամերժության բացառումը, տարածական տվյալների հետ կապված ծախսերի կրճատումը՝ միաժամանակ ավելացնելով տվյալների մատչելիության աստիճանը, միասնական տեղեկատվական հենքի միջոցով բարձրացնել որոշումների կայացման օպերատիվությունը:

81. Տրանսպորտային ցանցին վերաբերող տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

1) Պարունակում են հանրային հատվածի համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն.

2) Տեղեկատվությունը կիրառելի է կառավարման բոլոր մակարդակներում.

3) Հանդիսանալով տարածական տվյալների ենթակառուցվածքի մի մաս՝ տվյալները կարող են կիրառվել այլ տարածական տվյալների հետ, ինչպիսիք են՝ աշխարհագրական անվանումները, վարչական միավորները, հասցեները և այլն:

82. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

83. **Տրանսպորտը** պետության սոցիալ-տնտեսական գործունեության համակարգի բաղկացուցիչ մաս է, որը նախատեսված է քաղաքացիների և իրավաբանական անձանց տրանսպորտային պահանջարկի (կարիքների) բավարարման համար և ունի

հետևյալ տեսակները՝ ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային, վերգետնյա, էլեկտրական, մետրոպոլիտենի և խողովակաշարային:

84. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները, ըստ նշանակության, դասակարգվում են՝

1) միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ)

2) հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ)

3) մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներ):

85. *Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները* նրանք են, որոնք կապում են ՀՀ ճանապարհային ցանցն այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցությունը:

86. *Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները* նրանք են, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքի և միմյանց, մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ: Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ կարող են լինել նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ ու համար և նշվում են անվանացանկում հիմնական ճանապարհներից հետո՝ հանդիսանալով այդ ճանապարհի մասեր:

87. *Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները* նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ:

88. Տրանսպորտային ցանցին վերաբերող տարածական շերտերը վերաբերում են ավտոմոբիլային և երկաթուղային ուղիներին և ներկայացված են համապատասխանաբար պոլիգոնային և գծային տեսքով:

1) **Ավտոմոբիլային ճանապարհների տարածական շերտ**- պոլիգոնային է և վերաբերում է միջպետական, հանրապետական, մարզային ավտոճանապարհներին ու ներկայացվում է հետևյալ հիմնական հատկանիշներով (աղ. 1):

2) **Արտաքին նույնականացուցիչ (Id)**- օբյեկտի արտաքին իդենտիֆիկատորը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով:

3) **Ճանապարհի նշանակություն (Motorway_ Importance)** այսինքն՝ նշվում է թե ճանապարհը միջպետական, հանրապետական, մարզային (տեղական) նշանակության է:

4) **Անվանում (Name)** նշվում է ճանապարհի աշխարհագրական անվանումը:

5) **Մակերես (Area)** ցույց է տալիս ճանապարհի մակերեսը:

6) **Ճանապարհի լայնություն (Road_Width)** ցույց է տալիս ճանապարհի փաստացի լայնությունը՝ արտահայտված մ-ով:

Աղյուսակ 1. Ավտոճանապարհներ շերտի հատկանիշները

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Անվանում (Name)	VarChar (50)
Ճանապարհի նշանակություն (Motorway_ Importance)	VarChar (12)
Մակերես (Area)	Double(6)
Ճանապարհի լայնություն (Road_Width)	Double(3)

89. Ավտոմոբիլային ճանապարհի կենտրոնագծի տարածական շերտ-ներկայացվում է գծային տեսքով և ստորև նշված հիմնական հատկանիշներով (աղ. 2):

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id)
- 2) Ճանապարհի նշանակությունը (Motorway_Importance)
- 3) Անվանում (Name)
- 4) Երկարություն (Length)

Աղյուսակ 2. Ավտոճանապարհների կենտրոնագիծ շերտի հատկանիշները

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Անվանում (Name)	VarChar (50)
Ճանապարհի նշանակությունը (Motorway_Importance)	VarChar (12)
Երկարություն (Length)	Double(4)

90. Երկաթուղիների տարածական շերտ- ներկայացվում է գծային տեսքով և հետևյալ հիմնական հատկանիշներով (աղ. 3):

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id)
- 2) Անվանում (Name)
- 3) Երկարություն (Length)

Աղյուսակ 3. Երկաթուղիներ շերտի հատկանիշները

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Անվանում (Name)	VarChar (50)

Երկարություն (Length)	Double(4)
-----------------------	-----------

91. Տվյալները պիտի համապատասխանեն հետևյալ տոպոլոգիական կանոններին.

- 1) Ճանապարհները պետք է հատվեն խաչմերուկներում:
- 2) Պետք է բացառվեն վերադրման (բացառությամբ որոշ դեպքերի, օրինակ, կամուրջներ), ճանապարհի ընդհատումների դեպքերը:

**ԲԱԺԻՆ III. «ՕԴԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ»
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

**ԳԼՈՒԽ 12. «ՕԴԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ»
ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

92. Այս բազային խմբի տարածական տվյալների ստեղծման հիմնական նպատակը ՀՀ տարածքի միասնական, առավել ճշգրիտ, մանրամասն և հավաստի տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ ավելացնելով տվյալների մատչելիության աստիճանն ու բացառելով տվյալների իրարամերժությունը: Այս տվյալները հանդիսանում են տարածական հիմք այլ ոլորտներին վերաբերող թեմատիկ տարածական տվյալները կապակցելու կամ ներկայացնելու համար:

93. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

94. Օդատիեզերական լուսանկարահանման տվյալների խմբի մեջ ներառվում են օրթոլուսանկարների (օրթոֆոտոհատակագիծ) ծածկույթ (OrthoimageCoverage) և մոզաիկ էլեմենտ (MosaicElement) քարտեզագրական շերտերը:

95. *Օրթոյուսանկարների (օրթոֆոտոհատակագիծ) (OrthoimageCoverage) ծածկույթ*-երկրի մակերևույթի գեոկապակցված (օրթոռեկտիֆիկացված) լուսանկարներն են, որոնք ստացվել են տիեզերական կամ օդալուսանկարահանման արդյունքում: *Օրթոլուսանկարը* (օրթոֆոտոհատակագիծ) ռաստերային տարածական թվային մոդել է, այսինքն՝ բաղկացած է տողերից և սյունյակներից կազմված ուղղանկյուն պիքսելների ցանցից, որը ենթարկվում է օրթոռեկտիֆիկացիայի՝ սենսորի թեքության հետևանքով առաջացած աղավաղումները հեռացնելու նպատակով: Այն բաղկացած է ճառագայթման էներգիայի ինտենսիվությունը բնութագրող տարբեր արժեքներից, որը ներկայացված է կետերի կանոնավոր մատրիցայի տեսքով՝ համապատասխան մետատվյալների և գեոկապակցման գուգակցմամբ:

96. Օրթոլուսանկարների (օրթոֆոտոհատակագիծ) ծածկույթը կարող է բաղկացած լինել ինչպես մեկ օրթոլուսանկարից, այնպես էլ տարբեր ժամանակահատվածում արված մոզաիկ լուսանկարներից: *Մոզաիկ* է կոչվում օրթոռեկտիֆիկացված, առանձին հարակից նկարների միավորումից ստացված մեկ միասնական լուսանկարը: Քանի որ կարելի է տարբեր ժամանակահատվածում ստացված նկարներից ստանալ մոզաիկ լուսանկար, ապա կարևոր է, որ նշվի, թե յուրաքանչյուր լուսանկար երբ է ձեռք բերվել:

97. Տարբեր նպատակներից և առաջադրված խնդրից ելնելով՝ հաճախ նաև մեկ միասնական օրթոլուսանկարը (օրթոֆոտոհատակագիծ) կարելի է բաժանել առանձին ավելի փոքր մասերի: Ընդ որում, այն կարելի է բաժանել ինչպես հավասար ուղղանկյունների, այնպես էլ անհավասար միավորների (օր. ըստ վարչական միավորի կամ հետազոտվող առանձին տարածքների):

98. Այլ տարածական տվյալների հետ օրթոլուսանկարների երկրաչափական համապատասխանեցումը բավականին բարդ է, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

1) Տարածական լուծաչափեր- համադրելիության համար կարևոր է, որ դրանց չափը լինի խիստ նույնական:

2) Պիքսելները պետք է հավասարեցվեն:

3) Օրթոլուսանկարների և հետաքրքրող տարածքների սահմանների հստակ համադրումը բավականին բարդ է, քանի որ, որպես կանոն, գրեթե չկան կանոնավոր, ուղղանկյուն տեսքի սահմաններ, և դրա հետևանքով կանոնավոր ուղղանկյան տեսք ունեցող նկարները հաճախ ավելի շատ տարածք են ներկայացնում, քան պարփակված է հետաքրքրող տարածքի սահմանով:

99. Օրթոլուսանկարների (օրթոֆոտոհատակագիծ) ծածկույթ տարածական տվյալը հանդես է գալիս առնվազն չորս՝ տեսանելի (Red, Green, Blue) և մոտակա ինֆրակարմիր (NIR), սպեկտրալ շերտերով, մինչև 30 սմ տարածական լուծաչափով (GSD), յուրաքանչյուր շերտի (band) ռադիոմետրիկ լուծաչափը՝ նվազագույնը 8 բիթ:

100. Օդատիզերական լուսանկարահանման արդյունքում ստացված օրթոլուսանկարներին վերաբերող հատկանիշային տեղեկատվությունը ներկայացվում է որպես մետատվյալ և պահպանվում է կից մետատվյալների ֆայլում:

101. **Օրթոլուսանկարների (օրթոֆոտոհատակագիծ) ծածկույթի (OrthoimageCoverage)** համար առանձնացվում են հետևյալ մետատվյալները.

1) Արտաքին նույնականացուցիչ (Id)

2) Տիրույթի չափսերը (Domain_Extent) ցույց է տալիս օրթոլուսանկարների ծածկույթի տիրույթի տարածաժամանակային չափսերը (ընդգրկվածությունը): Տիրույթի չափերը տարածության մեջ պետք է սահմանվեն օգտագործելով առնվազն աշխարհագրական ծածկույթ (EX_GeographicExtent) ենթատեսակը:

3) Ինտերպոլյացիայի տեսակ (Interpolation_Type) ցույց է տալիս մաթեմատիկական մեթոդի՝ ինտերպոլյացիայի տեսակը, որը պետք է օգտագործվի շարունակական ծածկույթի գնահատման նպատակով, այսինքն՝ թույլ տա որոշել ծածկույթի արժեքները ցանկացած կետում: Եթե տվյալների մատակարարի կողմից չի սահմանվում ինտերպոլյացիայի տեսակը, ապա որպես լռելյայն արժեք ընդունվում է Nearest Neighbor տեսակը:

4) Անվանում (Name)

5) Սկզբի ամսաթիվ (Start_Date) ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ տարածական օբյեկտի տվյալի մուտքագրման ամսաթիվը:

6) Վերջին ամսաթիվ (End_Date) ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ տարածական օբյեկտի տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

7) Մոզաիկ տարր (Mosaic_Element) ներկայացվում է մոզաիկ տվյալի ստեղծման ժամանակը: Այս հատկանիշը լրացվում է միայն այն օբյեկտուսանկարների համար որոնք մոզաիկ են:

102. **Մոզաիկ տարր (Mosaic_Element)**-նույնականացնում է և՛ սահմանված տարածքը, և՛ մեկ կամ մի քանի մուտքագրված լուսանկարների ձեռքբերման ժամանակը, որոնք օգտագործվում են օդալուսանկարների ծածկույթի մոզաիկայի ստացման համար: Ձեռքբերման ժամանակահատվածը կարող է տրամադրվել կամ յուրաքանչյուր մուտքային լուսանկարի համար, կամ մուտքային լուսանկարների խմբի համար:

103. Այս տարածական շերտի համար առանձնացվում են հետևյալ կարևոր մետատվյալները.

1) Արտաքին նույնականացուցիչ (Id) օբյեկտի արտաքին իդենտիֆիկատորը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարրեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս իդենտիֆիկատորի հիմնական նպատակը տարրեր աղբյուրների և մոզաիկ էլեմենտի տարրերի միջև կապ ապահովելն է:

2) Անվանում (Name) հատուկ գոյական անուն, որը կիրառվում է մոզաիկ էլեմենտի համար: Այն կարող է օգտագործվել որպես «բանալի» տարրեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով:

3) Տարածական լուծաչափ (Spatial_Resolution) ներկայացվում է լուսանկարի լուծաչափը կամ, որ նույնն է, պիքսելի մեծության չափը:

4) **Պրոյեկցիա (Projection)** այս դաշտում ներկայացվում է տեղեկատվություն պրոյեկտման մասին: Եթե պրոյեկտված է տվյալը, ապա գրվում է նաև օգտագործված պրոյեկցիան:

5) **Ժամանակահատված (Phenomenon_Time)** ցույց է տալիս պատկերի (ների) ձեռքբերման ժամանակը: Ընդ որում, այս հատկանիշը վերաբերում է սենսորի միջոցով լուսանկարահանման պահի ամսաթվին և ժամին:

6) **Նկարի աղբյուր (Image_Source_Reference)** ցույց է տալիս մուտքագրված նկարի (մշակված կամ չմշակված) աղբյուրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ